ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Պողոսյան Ս. Հ. (ՀՀ Պետական կառավարման ակադեմիա, Երևան, Հայաստան)

sona.poghosyan@paara.am

Մեսրոբյան Վ. Ա. (ՀՀ ՀՀ Պետական կառավարման ակադեմիա, Երևան, Հայաստան)

vardine.mesropyan@mail.ru

Ներկայացման ամս. 21.12.2020

Գրախոսման ամս. 29.04.2021

Տպագրության ընդունման ամս. 14.05.2021

Հոդվածում ներկայացված են բարձրագույն կրթության հոգեբանական առանձնահատկությունները տարբեր երկրներում: Նպատակն է ուսումնասիրել կրթության կառավարման հոգեբանական յուրահատկությունները և բացահայտել տարբեր երկրների կրթական համակարգերի տարբերությունները և ընդհանրությունները: Որպես մեթոդ ընտրել ենք համեմատությունը, իսկ որպես համեմատության չափորոշիչներ առանձնացրել ենք բարձրագույն կրթության աստիճանը, ուսման տևողությունը, դասախոսի մասնագիտական-հոգեբանական որակները: Նման ուսումնասիրությունը հնարավորություն կընձեռի բացահայտել տարբեր երկրների դասախոսների մասնագիտական-հոգեբանական որակները, ինչի հիման վրա էլ կարող ենք կազմել դասախոսի հոգեբանական դիմանկարը:

DOI: *https://doi.org/10.46991/SBMP/2021.4.1.100*

Հանգուցային բառեր՝ *բարձրագույն կրթություն, տարբեր երկրներ, կրթական համակարգ, հոգեբանական առանձնահատկություն, տարբերություններ, ընդհանրություններ:*

Բարձրագույն կրթության հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրությունը ժամանակակից հասարակության առաջընթացի գրավականն է: Նոր տեխնոլոգիաների զարգացմանը զուգընթաց զարգացող երկրներում բարձրագույն կրթության համակարգը ևս ենթարկվում է փոփոխությունների, որի նպատակը մրցունակ մասնագետի ձևավորումն է, ինչը ենթադրում է դասախոսների վերապատրաստում, կրթական ծրագրերի վերափոխում: Հատկապես տեղեկատվական հեղափոխությունների դարաշրջանում

մեծ է ստեղծարար մասնագետների պահանջը, ովքեր ունակ են առաջադրելու խնդիրների նոր լուծումներ, ընդունելու ինքնուրույն որոշումներ: Սակայն այդ փոփոխություններն իրականացվում են՝ հաշվի առնելով ուսանողների պահանջները և նախընտրությունները, ինչի հետևանքով նրանք առավել շատ են ընդգրկվում ուսումնական գործընթացի մեջ՝դառնալով դասախոսի հետ միասին ուսումնական գործընթացի հավասարազոր մասնակիցներ, ինչը ստեղծում է դասախոս-ուսանող փոխազդեցության նոր հարացույց, որը բարձրագույն կրթությունը կարող է ապահովել նոր որակով: Այսպիսի փոփոխություններից զերծ չէ նաև ՀՀ բարձրագույն կրթության համակարգը, որի վերակառուցումն ու արդիականացումն ունի մեր երկրի համար ռազմավարական նշանակություն: Այսօր առավել քան երբևէ կարևորվում է կրթության, գիտության և գործարարության սերտ համագործակցությունը ապագա մասնագետների պատրաստման գործում:

Պայմանավորված ժամանակակից հասարակության արդիական խնդիրներով և պահանջներով՝ կրթության կառավարման համակարգում տեղի են ունենում որոշակի փոփոխություններ: Ակներև է զարգացած երկրները եկել են այն գիտակցությանը, որ իրենց զարգացվածության և մշակույթի աստիճանը որոշվում է կրթության զարգացվածության մակարդակով [3]:

Տնտեսության արագ զարգացման գործում ամենակարևոր ռեսուրսներն են մարդը և գիտելիքը: Այս հանգամանքը նոր պահանջներ է ներկայացնում ժամանակակից բարձրագույն ուսումնական հաստատություններին և ընդհանրապես կրթական համակարգերին: Առաջատար երկրների կրթական համակարգերում գնալով մեծանում է առկա բարձրագույն ուսումնական հաստատությունների կառավարման վերափոխման անհրաժեշտությունը, որը միտված է բարձրացնելու նրանց հարմարվողականությունը նոր շուկայական պայմաններին: Ժամանակակից շատ ուսումնական հաստատությունների վարկանիշը որոշվում է նաև գիտական հետազոտությունների արդյունքով, որը այսօրվա կրթության կարևոր բաղադրիչներից է: Ըստ այդմ էլ դասախոսի գործունեությունը ներառում է նաև գիտահետազոտական բաղադրիչ, որը պահանջում է հատուկ ընդունակությունների առկայություն, ինչն անհրաժեշտ է հաշվի առնել ժամանակակից դասախոսի հոգեբանական դիմանկարը կազմելու գործընթացում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ մենք նպատակ դրեցինք ուսումնասիրել կրթության կառավարման հոգեբանական յուրահատկությունները, բացահայտել տարբեր երկրների կրթական համակարգերի տարբերությունները և ընդհանրությունները, որոնք էլ պայմանավորում են դասախոսի մասնագիտական հոգեբանական որակները: Որպես մեթոդ ընտրել ենք համեմատությունը, իսկ որպես համեմատության չափորոշիչներ առանձնացրել ենք բարձրագույն կրթության աստիճանը, ուսման տևողությունը, դասախոսի մասնագիտական-հոգեբանական որակները: Այս համատեքստում մենք շեշտադրում ենք դասա-

խոսների՝ որպես ուսումնական գործընթացի կառավարիչների մասնագիտական-հոգեբանական որակները, որոնք առաջնային են համարվում տվյալ երկրում: Նման ուսումնասիրությունը հնարավորություն կընձեռի բացահայտել տարբեր երկրների դասախոսների մասնագիտական-հոգեբանական որակները, ինչի հիման վրա էլ կարող ենք կազմել դասախոսի հոգեբանական դիմանկարը:

Կառավարումը բարդ, բազմագործառութային մի համակարգ է, որն իր ուրույն դերն ունի մարդկային հաղորդակցման և աշխատանքային գործընթացում: Առանց այս գործընթացի անհնար է պատկերացնել մարդկային գործունեությունը իր բոլոր ոլորտերով՝ քաղաքականություն, ուսում, աշխատանք: Այդ է պատճառը, որ ներկայումս հոգեբանությունը շեշտադրում է կառավարման համակարգի հոգեբանական կողմերի ուսումնասիրումը՝ պայմանավորված «մարդ-մարդ» փոխազդեցության համակարգում առկա բազմաթիվ հոգեբանական երևույթներով: Վերջիններիս ուսումնասիրումը կարող է բարելավել և ավելի արդյունավետ դարձնել ցանկացած կառավարչական գործընթաց [2 էջ 5, 35]:

Կրթության համակարգի կառավարումը իրենից ներկայացնում է հատուկ գործունեություն, որի ընթացքում կրթության սուբյեկտները կառավարման գործառույթների միջոցով ապահովում են համակարգի և ուսումնական հաստատությունների արդյունավետ կառավարումը, ենթահամակարգերի (կառավարման մարմիններ և ուսումնական ստորաբաժանումների) համատեղ գործունեության կազմակերպումը իրենց կառավարման նպատակներին հասնելու համար: Կրթությունը սոցիալական կառույց է, հասարակության ենթակառուցվածքներից մեկը: Կրթության զարգացումն ու ընթացքը պայմանավորված են հասարակության գոյության բոլոր գործոններով և պայմաններով՝ տնտեսական, քաղաքական, սոցիալական, մշակութային և այլն: Կրթությունը՝ որպես սոցիալական կառույց, բարդ համակարգ է, որը ձևավորվել և շարունակում է ձևավորվել պետության կողմից: Կրթությունը՝ հատկապես բարձրագույն կրթությունը, համարվում է սոցիալական և տնտեսական առաջընթացի գլխավոր և առաջատար գործոն: Կրթության կառավարման հիմնական նպատակն է կրթական բոլոր տեսակների կենսապահովման համակարգերի ձևավորումը և զարգացումը կրթական գործընթացում: Ինչպես ցանկացած կառավարման գործունեություն, այն կառուցված է որոշակի սկզբունքներով, որոնք նպաստում են կառավարման արդյունավետության բարձրացմանը [12]:

Կրթական համակարգի գլխավոր համակարգաստեղծ, իմաստաստեղծ բաղադրիչը կրթության նպատակն է, այսինքն այն հարցի պատասխանը, թե հասարակությանը իր պատմական զարգացման տվյալ փուլում ինչպիսի անձ է անհրաժեշտ: Յուրաքանչյուր երկրում, սկսած հնագույն ժամանակներից, կրթությունը որպես համակարգ ձևավորվել է կոնկրետ հասարակական-պատմական պայմաններին համապատասխան, որոնք բնութագրում են հա-

սարակության զարգացման որոշակի շրջանը [14]: Կրթության նպատակը որոշում է դրա բոլոր մնացած բաղադրիչները. պետական կրթական չափորոշիչները, կրթական հաստատությունների ցանկը, կրթության կառավարման մարմինները:

Ժամանակակից աշխարհում բարձրագույն կրթության զարգացման բնույթն ու շարժիչ ուժերը հասկանալու համար անհրաժեշտ է հաշվի առնել մի շարք ընդհանուր պայմաններ և կայուն նախադրյալներ, որոնք ուղղակիորեն ազդում են ընդհանուր առմամբ կրթական ոլորտի և հատկապես բարձրագույն կրթության վրա: Այդ նախադրյալներն են՝ սոցիալ-քաղաքական, գիտատեխնիկական և նույնիսկ բարոյական կարգի օրենքները [10]:

Այսպիսով, այս և մի շարք այլ միտումներ տարբեր երկրներում արտահայտվում են յուրովի՝ կախված ազգային բնութագրերից, տնտեսության վիճակից, կրթական համակարգի ավանդույթներից: Սակայն մի հանգամանք կարող ենք շեշտել, բարձրագույն կրթության բարեփոխումները ձեռք են բերել պետական քաղաքականության կարգավիճակ, քանի որ պետությունները սկսեցին հասկանալ, որ երկրում բարձրագույն կրթության մակարդակը որոշում է նրա ապագա զարգացումը և այն ունի հանրօգուտ նշանակություն: Մենք էլ ենք համաձայն սույն կարծիքի հետ, որ «Փոխելով կրթական համակարգը՝ մենք փոխում ենք մարդկանց կյանքի ոճը և հասարակության բնույթը» [11]:

Իսկ այժմ անդրադառնանք տարբեր երկրներում գործող կրթական համակարգերին, պարզաբանենք բարձրագույն կրթության ընդհանուր գաղափարը:

Հարկ է նշել, որ սկզբնական շրջանում համալսարանները անկախ, ինքնավար գիտական և ուսումնական հաստատություններ էին. իրենք էին որոշում իրենց կանոնադրությունը, ընտրում ռեկտորներին և դեկաններին, ինչը փաստում է, որ համալսարանները իրենք էին իրականացնում իրենց կառավարման համակարգը, անկախ էին եկեղեցուց, պետությունից: Ի դեպ, առաջին եվրոպական համալսարանները ձևավորվել են 12-13 դարերում՝ որպես գիտնականների կամ ուսումնատենչ երիտասարդների միություններ: Սակայն դարերի ընթացքում փոխվեց համալսարանների անկախությունը, նրանք սկսեցին պատկանել և՛ պետությանը, և՛ մասնավոր սեփականությանը: Իսկ ներկայիս քաղաքակրթությունում համալսարանները բացի գիտելիքների փոխանցումից և դասավանդման գործընթացից, իրականացնում են բազմաթիվ այլ գործառույթներ [7]:

Բարձրագույն կրթության մասին խոսելիս պետք է անդրադառնանք Սորբոնի դեկլարացիային՝ «Եվրոպական բարձրագույն կրթության համակարգի կառուցվածքային ներդաշնակության մասին» փաստաթուղթը (Ֆրանսիա, Իտալիա, Միացյալ Թագավորություն և Գերմանիա, 1998 թվականի մայիս): Սորբոնի դեկլարացիայի կիզակետում են գտնվում եվրոպական բարձրագույն

կրթության համակարգում ընդունված ուսուցման աստիճանների ինտեգրումը բարձրագույն կրթության բաց դաշտի մեջ, գիտական աստիճանների նախաաստիճանավորված բակալավրի (undergraduates Bachelor's degree), աստիճանավորված մագիստրոսի և դոկտորի աստիճանների (graduates Master's and doctoral degree) ընդհանուր համակարգի ընդունում: Դասախոսների և ուսանողների տեղափոխությունների/ փոխանակումների խրախուսումը (ուսանողները պետք է առնվազն մեկ կիսամյակ անցկացնեն արտասահմանում): Տեղեփոխություններին/փոխանակումներին խոչընդոտող գործոնների վերացում և գիտական աստիճանների ու որակավորումների համընդհանուր ճանաչման ապահովումը: Շարունակելով այս գործընթացը՝ 1999թ.-ի հունիսի 19-ին Բոլոնիայում 29 եվրոպական երկրների կրթության նախարարները ստորագրեցին մի հռչակագիր՝ մինչև 2010 թվականը բարձրագույն կրթության՝ եվրոպական համընդհանուր դաշտ ստեղծելու և բարձրագույն կրթության եվրոպական համակարգի համաշխարհային ճանաչումն ու ընդունումը խթանելու վերաբերյալ: Բոլոնիայի հռչակագրում նախարարությունները պատրաստակամություն հայտնեցին սահմանել համազոր և համեմատելի գիտական աստիճանների ընդհանուր համակարգ, սահմանել երկու հիմնական կրթական աստիճաններից բաղկացած համակարգ (undergraduate/graduate նախաաստիճանավորված/աստիճանավորված), մշակել կրեդիտների համակարգ (credit system), ինչպիսն է Կրեդիտների փոխանցման եվրոպական համակարգը (ԿՓԵԽ) (European Credit Transfer System), վերացնել դասախոսների և ուսանողների տեղափոխություններին/ փոխանակումներին խոչընդոտող գործոնները, խթանել բարձրագույն կրթության որակի բարձրացմանն ուղղված համագործակցությունը եվրոպական համալսարանների միջև, ընդլայնել եվրոպական համագործակցությունը՝ որակավորման բարձրացման նպատակով [3]:

Այսպիսով, գործընթացի կարևորագույն նպատակն է եվրոպական բարձրագույն կրթության համակարգը դարձնել առավել թափանցիկ և փոխընդունելի: Այն պետք է բարձրագույն կրթության տարբեր ազգային համակարգերը տեղակայի մեկ ընդհանուր ինտեգրված դաշտի մեջ, որը կառաջարկի երեք գիտական աստիճաններ՝ բակալավրի, մագիստրոսի և դոկտորի, սակայն կընդունի դրանց ձեռք բերման տարբեր եղանակները: Հավելենք, որ 2005 թվականի մայիսի 15-ից Բոլոնյան հռչակագրին միացել է նաև Հայաստանը:

Այժմ ներկայացնենք բարձրագույն կրթության առանձնահատկությունները, նմանությունները և տարբերությունները, դասախոսի հոգեբանական որակները աղյուսակի տեսքով: Նման աշխատանք կատարելու համար հիմք ենք ընդունել այնպիսի հեղինակների աշխատություններ, ինչպիսիք են Ա Ա. Դերկաչը, Լ. Պ. Ռյաբովը, Ա. Ա. Վերբինցկին, Բ. Վ. Վուլսֆոնը, Ա. Դ. Նովիկովը, Բ. Ա. Ռուչկինը, Ռ. Աղուզումցյանը, Ի. Պ. Կուզմինը, Կ.Ֆլեդմանը, Վ. Գ. Զազիկինը, Գ. Մ. Իերքսը, Ջ. Դոդսոնը, և այլք, ինչպես նաև տվյալ երկրի կրթական օրենքները:

Աղյուսակ 1. *Բարձրագույն կրթության առանձնահատկությունները, նմանությունները և տարբերությունները, դասախոսի հոգեբանական որակները.*

Երկիրը	**Բարձրագույն կրթության աստիճանը**	**Ուսման տևողությունը**	**Դասախոսի մասնագիտական որակ**	**Դասախոսի հոգեբանական որակ**
Հայաստան	1.Բակալավրի աստիճան 2.Մագիստրոսի աստիճան 3.Ասպիրանտուրա/հայցորդ 4.Դոկտորանտուրա	4 2 3+1 3	Մասնագիտական գիտելիքներ, Արհեստավարժություն Հռետորական ունակություն	Հաղորդակցման ունակություն Միջանձնային հարբերություններ կառուցելու ունակություն
Ռուսաստան	1.Բակալավրի աստիճան 2.1 Մագիստրոսի աստիճան 2.2.Մասնագիտացում 3.Ասպիրանտուրա	3+1 2 5+1 3+1	Տեսական գիտելիքների իմացություն Մասնագիտական ձեռագիր, ոճ Կառավարման ունակություն	Համարձակություն Նրբանկատություն Հուզական կայունություն Հումորի ունակություն
ԱՄՆ	1. Բակալավրի աստիճան 2.Մագիստրոսի աստիճան 3.Ասպիրանտուրա	4 2 4+2	Արհեստավարժություն Ստեղծարարություն Մասնագիտական գիտելիքներ	Ոգևորվածություն Նրբանկատություն Հումորի ունակություն Բարություն

Հապոնիա	1.Նեղ-մասնագիտացում 2.Մագիստրոսի աստիճան 3.Ասպիրանտուրա 4.Դոկտորանտուրա	4+1 2 3 5	Մասնագիտական գիտելիքներ Արհեստավարժություն Կամքի ուժ	Հետաքրքրություն Բարոյականություն Ճկունություն
Գերմանիա	1. Բակալավրի աստիճան 2.Մագիստրոսի աստիճան 3. Դիպլոմ/Диплома/մասնագիտացում	3+1 1,5+2 4+1	Մասնագիտական գիտելիքներ Արհեստավարժություն	Ճկունություն Հուզական կայունություն
Ֆրանսիա	1.Բակալավրի աստիճան 2.Մագիստրոսի աստիճան 3.Ասպիրանտուրա/հայցորդ	3+2 1+1 3+1	Մասնագիտական գիտելիք Արհեստավարժություն Շարժունակություն	Հուզական կայունություն Բարեխղճություն
Մեծ Բրիտանիա	1.Բակալավրի աստիճան 2.Մագիստրոսի աստիճան 3.Ասպիրանտուրա	3 1 3+1	Արհեստավարժություն Հումորի զգացողություն Արդյունավետություն	Հուզական կայունություն Ֆիզիկական ուժ Բարդ իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն

Ինչպես երևում է աղյուսակից, տարբեր երկրներում առկա կրթական համակարգերը կարգավորվում են Բոլոնյան հռչակագրի շրջանակներում, առկա է գիտական երեք աստիճան: Ուսման տևողության միջև տարբերություններն էական չեն: Իսկ ահա մասնագիտական որակների մեջ յուրաքանչյուր երկիր ունի իր նախապատվությունը:

Կրթական համակարգերի վերլուծությունից հետո պարզ է դառնում, որ դրանք ունեն որոշակի ընդհանրություններ և օրինաչափություններ: Կրթությունը տարբեր երկրներում ունի իր յուրահատկությունները՝ պայմանավորված տվյալ երկրի քաղաքատնտեսական, կրթական ավանդույթներով և արժեքներով: Դիտարկելով այս երկրների կրթական համակարգերը՝ ցանկացել ենք շեշտել Բոլոնյան գործընթացի դերը և նշանակությունը կրթական գործընթացում, թե ինչպես տարբեր երկրներ և կրթական համակարգեր միավորվում են մեկ ընդհանուր գաղափարի և կրթական չափորոշիչների շուրջ, որի հիմնական նպատակը տարբեր բարձրագույն կրթության համակարգերի կառուցվածքային ներդաշնակության ապահովումն է [15]: Եվ ընտրելով համեմատության մեթոդը և որպես չափորոշիչ առանձնացնելով դասախոսի մասնագիտական-հոգեբանական որակները՝ տեսնում ենք, որ առկա են ընդհանրություններ հատկապես հետևյալ որակների վերաբերյալ՝ մասնագիտական գիտելիքներ, արհեստավարժություն, հռետորական ունակություն, հուզական կայունություն, հումորի զգացողություն, ստեղծարարություն, ֆիզիկական ուժ, բարդ իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, ոգևորվածություն, նրբանկատություն: Նշենք, որ մասնագիտական որակների ուսումնասիրման

վերաբերյալ մեր կողմից իրականացվել է մանրազնին ուսումնասիրություն, իրականացրել ենք հետազոտություններ ՀՀ-ում, որոնք թույլ են տվել դուրս բերել հայաստանյան կրթության կառավարիչների, ինչպես նաև դասախոսի մասնագիտական-հոգեբանական որակները և դրանց առաջնահերթությունները [6]: Ինչ խոսք, տարբերությունները պայմանավորված են տվյալ երկրի արժեքներով, ավանդույթներով: Դասախոսի մասնագիտական-հոգեբանական որակների ընդհանրությունները տարբեր երկրներում բերում են այն համոզման, որ ժամանակակից կրթության պահանջները շեշտադրում են հենց այս որակները, ինչը թույլ է տալիս ունենալ դասախոսի համակողմանի հոգեբանական դիմանկար: Այսպիսով, դասախոսի ընդհանրական հոգեբանական դիմանկարում կարևոր մասնագիտական-հոգեբանական որակներն են արհեստավարժությունը, հռետորական ունակությունը, հուզական կայունությունը, հումորի զգացումը, նրբանկատությունը, եռանդը, բարդ իրավիճակներում կողմնորոշվելու ունակությունը, ոգևորվածությունը:

Այս որակների ուսումնասիրությանն են նվիրված մեր հետագա աշխատանքները, ինչը հնարավորություն կընձեռի կազմելու դասախոսի՝ ուսումնական գործընթացի կառավարչի հոգեբանական դիմանկարը, որն էլ կդառնա դասախոսների վերապատրաստման անկյունաքարը:

Գրականություն

1. **Աղուզումցյան Ռ., Պետրոսյան Լ. Պողոսյան Ս., Խաչատրյան Ա.,** Կառավարչական գործունեության առանձնահատկությունների հոգեբանական նկարագիրը, Երևան, ՀՀ պետական կառավարման ակադեմիա, 2015, 231 էջ
2. **Աղուզումցյան Ռ., Պետրոսյան Լ., Պողոսյան Ս., Խաչատրյան Ա.** Կառավարիչների հոգեբանական ընտրության գործընթացի առանձնահատկությունները Երևան 2016 էջ 5, 35.
3. Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, Նոյան Տապան, Երևան 2005, էջ 69:
4. Հայաստանի Հանրապետության օրենքը կրթության մասին 14 ապրիլի 1999 թ. http://www.anqa.am/hy/մեր-մասին/իրավական-հենք/օրենքներ/կրթության-մասին-hh-օրենքը/:
5. **Սարգսյան Յու. Լ., Բուդաղյան Ա. Ս.,** Բոլոնիայի գործընթացը Հայաստանում. ուղեցույց: Բարձրագույն կրթության ռազմավարական հետազոտությունների ազգային կենտրոն, Երևան, Անտարես, 2008թ., 74 էջ:
6. **Մեսրոբյան Վ.** «Կրթության կառավարիչների մասնագիտական և հոգեբանական որակների ուսումնասիրություն» https://paara.am/wp-content/uploads/2012/04/HK-2018-3-4_16.07.2018.pdf
7. **Бедный Б. И., Стронгин Р. Г., Чупрунов Е. В., Грудзинский А. О., Гурбатов С. Н., Ершов С. Н.,. Лебедев В. В, Петров А. В., Стронгина**

Н. Р., Швецов В. И.. Управление вузом в современных условиях (опыт Нижегородского университета) / Н. Новгород: Изд- во ННГУ, 2010. 136 с.
8. **Розанова В. А,** Психология управления. Москва., 2010, 420с.
9. **Рябов Л. П.** Анализ позитивных изменений и инновационных процессов в системах высшего профессионального образования развитых стран: США, Японии, Германии, Франции, Великобритании.– М., 2001.
10. **Урбанович А. А.** - Психология управления. Мн.: Харвест, 2007 - 640 с.
11. **Филиппов А.** Утопия образования. Отечественные записки. 2002. №1 https://magazines.gorky.media/oz/2002/1/utopiya-obrazovaniya.html (ɯɟg` 18.02.2021).
12. **Новиков Д. А.** Введение в теорию управления образовательными системами М.: Эгвес, 2009. – 156 с.
13. **Смирнов С. Д.** Педагогика и психология высшего образования: от деятельности к личности Учеб. пособие для студ. высш. пед. учеб. заведений. - М.: Издательский центр "Академия", 2001. - 304 с.
14. **Баранова Т. А., Муратова Ю. Р., Овчинникова Ю. В.,** http://ecsocman.hse.ru/data/2010/12/18/1214862419/18ovch.pdf (ɯɟg` 22.02.2021)
15. The Sorbonne and Bologna Declarations on European Higher Education https://ejournals.bc.edu/ojs/index.php/ihe/article/viewFile/6850/6068 (ɯɟg` 20.02.2021)

ПСИХОЛОГИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ВЫСШЕГО ОБРАЗОВАНИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ И ДРУГИХ СТРАНАХ

Погосян С. Г. (АГУ РА, Ереван, Армения)

Месробян В. А. (АГУ РА, Ереван, Армения)

В статье представлены результаты исследования психологических особенностей высшего образования в разных странах. Целью статьи является исследование психологических особенностей управления образованием и выявление различий в образовательных системах разных стран. Для осуществления исследования выбран метод сравнения, а в качестве критериев сравнения выделены уровень высшего образования, продолжительность обучения, профессионально-психологические качества преподавателя. Такое исследование даст возможность выявить профессионально-психологические качества преподавателей разных стран, на основе которых будет возможно составить психологический портрет преподавателя.

Ключевые слова: *высшее образование, разные страны, образовательная система, психологическая особенность, различия, сходства.*

PSYCHOLOGICAL PECULIARITIES OF HIGHER EDUCATION IN THE REPUBLIC OF ARMENIA AND OTHER COUNTRIES

Poghosyan S. H. (PAA RA, Yerevan, Armenia)

Mesrobyan V. A. (PAA RA, Yerevan, Armenia)

The article presents the psychological peculiarities of higher education in different countries. The aim of the article is to present the psychological peculiarities of higher education in different countries. The aim of this article is to study the psychological peculiarities of education in management, to reveal the differences and commonalities of the educational systems of different countries. We have chosen comparison as a method, and as criteria of comparison we have singled out the level of higher education, the duration of study and the professional-psychological qualities of the lecturer. Such a study will provide an opportunity to identify the professional-psychological qualities of lecturers from different countries, on the basis of which we can compile a psychological portrait of a lecturer.

Keywords: *higher education, different countries, educational system, psychological peculiarity, differences, commonalities.*